«ԵՊՀ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 «12» ապրիլի 2021 թ.

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամը, ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Շինարար-97 ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ԵՊՀ Բյուրականի ՌԱԲ-ի 2-րդ մասնաշենքի և ճաշարանի ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 14 հունիսի 2021թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ

շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 23206711 (քսաներեք միլիոն երկու հարյուր վեց հազար յոթ հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ, որից 3867785 (երեք միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ	Շինարար-97 ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
«Արդիշինբանկ» ՓԲԸ	Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՇԻՐԱԿ Մ/Ճ
Հ/Հ՝ 247010000906	Հ/Հ՝ 163527033183
Հեռ.՝ (+37410) 555240	Հեռ.՝ 093030366
Էլ. հասցե՝ gnumner.eph@mail.ru	Էլ. հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
ՀՎՀՀ՝ 01506928	ՀՎՀՀ՝ 05510886
Պրոռեկտոր՝ _____ Ա.Գ. Մալխասյան	Տնօրեն՝ _____ Հովհաննես Ահարոնյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«12» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԵՊՀ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒԱԲ-Ի 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՃԱՇԱՐԱՆԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6
	1. ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի 2-րդ մասնաշենքի ջեռուցում				
1	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ	էկմ	290.92	0.7	203.644
2	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց	1039	3.7	3844.3
3	Մարտկոցների ամրացման դետալներ	հատ	262	1.4	366.8
4	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ32x5,4մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	32	1.7	54.4
5	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ50x8,3մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	62	3.9	241.8
6	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ40x6,7մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	298	2.6	774.8
7	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ32x5,4մմ, փորձարկումով	գմ	260	1.7	442
8	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x4,2մմ, փորձարկումով	գմ	95	1.2	114
9	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20x3,4մմ, փորձարկումով	գմ	560	1.1	616
10	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ15մմ	հատ	128	1.8	230.4
11	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ20մմ	հատ	8	1.8	14.4
12	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ25մմ	հատ	8	2.1	16.8
13	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ32մմ	հատ	6	2.2	13.2
14	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ40մմ	հատ	2	2.7	5.4
15	Փական օդահեռացման մայեվսկու 15մմ	հատ	124	0.5	62
16	Փականների տեղադրում ջերմակարկավորիչ սարքի մոտ Φ15մմ	հատ	124	1.3	161.2
17	Անցքերի բացում միջնապատերում մինչև Φ100մմ	հատ	48	0.7	33.6
18	Անցքերի բացում պատերում մինչև Φ100մմ-իվ բարձր	հատ	60	2.4	144

19	Ձևավոր մասեր և ֆիտինգներ	հատ	680	0.4	272
	Ընդամենը բաժին				7610.744
	2. ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի ճաշարանի ջեռուցում				
1	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ	էկմ	52.64	0.7	36.848
2	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց	188	3.7	695.6
3	Մարտկոցների ամրացման դետալներ	հատ	44	1.4	61.6
4	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ32x5,4մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	8	1.7	13.6
5	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ32x5,4մմ, փորձարկումով	գմ	68	1.7	115.6
6	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x4,2մմ, փորձարկումով	գմ	47	1.2	56.4
7	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20x3,4մմ, փորձարկումով	գմ	105	1.1	115.5
8	Ձևավոր մասեր և ֆիտինգներ	հատ	95	0.4	38
9	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ15մմ	հատ	18	1.3	23.4
10	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ25մմ	հատ	4	2.1	8.4
11	Փական օդահեռացման մայեվսկու 15մմ	հատ	18	0.5	9
12	Փականների տեղադրում ջերմակարկավորիչ սարքի մոտ Φ15մմ	հատ	18	1.8	32.4
13	Անցքերի բացում միջնապատերում մինչև Φ100մմ	հատ	13	0.7	9.1
	Ընդամենը բաժին				1215.448
	3. Կաթսայատան, 1-ին և 2-րդ հարկերի ջեռուցում				
*1	Ջրատաքացուցիչ կաթսա SQUIRREL, N=45կվ/ժ, Q=38700կկ/ժ	կոմպ	1	1435	1435
*2	Ջրատաքացուցիչ կաթսա SQUIRREL , N=60կվ/ժ, Q=51600կկ/ժ	կոմպ	1	1902	1902
*3	Շրջանառու պոմպ CPm132A , G=8,0 մ3/ժ, H=12,0մ, N=0.60 կվտ	հատ	2	77.1	154.2
4	Ծխնելույզի մոնտաժում D100մմ, D150մմ	տն	0.041	180	7.380
5	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	1	5.6	5.6
6	159x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2	7.1	14.2
7	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ2	1.338	1.6	2.141
8	Օդատար ցինկապատ պողպատից D=150	մ2	0.471	4.1	1.9311
*9	Ջրի մշակման էլեկտրամագնիսական սարք AMO-25-Y4	հատ	1	311	311
10	Օդային ճաղավանդակ P150	հատ	2	2.1	4.2
11	Փական դատարկման d=15	հատ	2	1.3	2.6
12	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ63x8,9մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	13	5.3	68.9
13	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ50x8,3մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	4	3.7	14.8
14	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ40x6,7մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	8	2.4	19.2
15	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x4,2մմ, փորձարկումով	գմ	6	1.2	7.2
16	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում	գմ	8	1.1	8.8

	Φ20x3,4մմ, փորձարկումով				
17	Փական թիթեռնիկավոր Φ40մմ	հատ	3	5.4	16.2
18	Փական թիթեռնիկավոր Φ32մմ	հատ	3	3.7	11.1
19	Փական թիթեռնիկավոր Φ25մմ	հատ	4	1.8	7.2
20	Փական թիթեռնիկավոր Φ15մմ	հատ	2	1.2	2.4
21	Ճնշումաչափ	հատ	2	4.5	9
22	Հետադարձ փական Φ40մմ	հատ	1	2.3	2.3
23	Հետադարձ փական Φ32մմ	հատ	1	2.1	2.1
24	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ /փորձարկումով/	գմ	3	0.8	2.4
25	Պեղպատե խողովակաշարի տեղադրում D20x2,5մմ	գմ	4	1.6	6.4
26	Պեղպատե խողովակաշարի տեղադրում D25x2,5մմ	գմ	4	1.6	6.4
27	Խողովակների պնեումատիկ փորձարկում	գմ	8	0.1	0.8
28	Գնդիկավոր փական Φ20մմ	հատ	1	1.8	1.8
29	Գնդիկավոր փական Φ25մմ	հատ	1	2.3	2.3
*30	Էլ. Մագնիսական կափույր d=25 Ազդանշանային սարք /դեդեկտոր/	հատ	1	16.4	16.4
	Ընդամենը բաժին				4045.952
	4. Կաթսայատան, 3-րդ և 4-րդ հարկերի ջեռուցում				
*1	Ջրատաքացուցիչ կաթսա SQUIRREL , N=36կվ/ժ, Q=30960կկ/ժ	կոմպ	1	1164	1164
*2	Ջրատաքացուցիչ կաթսաSQUIRREL, N=45կվ/ժ, Q=38700կկ/ժ	կոմպ	1	1435	1435
*3	Շրջանառու պոմպ CPm130, G=5,0 մ3/ժ, H=12,0մ, N=0.37 կվտ	հատ	2	59	118
4	Ծխնելույզի մոնտաժում D100մմ, D150մմ	տն	0.041	180	7.380
5	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	1	5.6	5.6
6	159x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2	7.1	14.2
7	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ2	1.338	1.6	2.141
8	Օդատար ցինկապատ պողպատից D=150	մ2	0.471	4.1	1.931
*9	Ջրի մշակման էլեկտրամագնիսական սարք AMO-25-Y4	հատ	1	311	311
10	Օդային ճաղավանդակ P150	հատ	2	2.1	4.2
11	Փական դատարկման d=15	հատ	2	1.3	2.6
12	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ20x2.5մմ փորձարկումով	գմ	6	1.6	9.6
13	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ50x8,3մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	14	3.7	51.8
14	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ40x6,7մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	8	2.4	19.2
15	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x4,2մմ, փորձարկումով	գմ	6	1.2	7.2
16	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20x3,4մմ, փորձարկումով	գմ	8	1.1	8.8
17	Փական թիթեռնիկավոր Φ32մմ	հատ	6	3.7	22.2
18	Փական թիթեռնիկավոր Φ25մմ	հատ	4	1.8	7.2
19	Փական թիթեռնիկավոր Φ15մմ	հատ	2	1.2	2.4
20	Ճնշումաչափ	հատ	2	4.5	9

21	Հետադարձ փական Φ32մմ	հատ	2	2.1	4.2
22	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ /փորձարկումով/	գմ	3	0.8	2.4
23	Պեղպատե խողովակաշարի տեղադրում D20x2,5մմ	գմ	4	1.6	6.4
24	Պեղպատե խողովակաշարի տեղադրում D25x2,5մմ	գմ	4	1.6	6.4
25	Խողովակների պնեումատիկ փորձարկում	գմ	8	0.1	0.8
26	Գնդիկավոր փական Φ20մմ	հատ	1	1.8	1.8
27	Գնդիկավոր փական Φ25մմ	հատ	1	2.3	2.3
*28	Էլ. Մագնիսական կափույր d=25 Ազդանշանային սարք /դեդեկտոր/	հատ	1	16.4	16.4
	Ընդամենը բաժին				3244.152
	5. ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի ճաշարանի մասնաշենքի ջեռուցում				
*1	Ջրատաքացուցիչ կաթսա SQUIRREL, N=31կվ/ժ, Q=26660կկ/ժ	կոմպ	1	713	713
*2	Շրջանառու պոմպ G=5,0 մ3/ժ, H=5,0մ, N=0.37 կվտ	հատ	2	53.3	106.6
3	Ծխնելույզի մոնտաժում D100մմ	տն	0.021	180	3.780
4	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2	5.6	11.2
5	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ2	0.678	1.6	1.085
6	Օդատար ցինկապատ պողպատից D=150	մ2	0.471	4.1	1.931
*7	Ջրի մշակման էլեկտրամագնիսական սարք AMO-25-Y4	հատ	1	311	311
8	Օդային ճաղավանդակ P150	հատ	2	2.1	4.2
9	Փական դատարկման d=15	հատ	2	1.3	2.6
10	Պողպատե խողովակաշարի տեղադրում Φ20x2.5մմ փորձարկումով	գմ	3	155	465
11	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ40x6,7մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	3	2.4	7.2
12	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ32x5,4մմ, փորձարկումով մեկուսացումով	գմ	6	2.2	13.2
13	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ25x4,2մմ, փորձարկումով	գմ	3	1.2	3.6
14	Պոլիպրոպիլենային խողովակաշարի տեղադրում Φ20x3,4մմ, փորձարկումով	գմ	6	1.1	6.6
15	Փական թիթեռնիկավոր Φ32մմ	հատ	3	3.7	11.1
16	Փական թիթեռնիկավոր Φ25մմ	հատ	4	1.8	7.2
17	Փական թիթեռնիկավոր Φ15մմ	հատ	1	1.2	1.2
18	Ճնշումաչափ	հատ	1	4.5	4.5
19	Հետադարձ փական Φ32մմ	հատ	1	2.1	2.1
20	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում Φ50մմ /փորձարկումով/	գմ	3	0.8	2.4
21	Պեղպատե խողովակաշարի տեղադրում D20x2,5մմ	գմ	5	1.6	8
22	Խողովակների պնեումատիկ փորձարկում	գմ	5	0.1	0.5
23	Գնդիկավոր փական Φ20մմ	հատ	1	1.8	1.8
*24	Էլ. Մագնիսական կափույր d=25 Ազդանշանային սարք /դեդեկտոր/	հատ	1	16.4	16.4
	Ընդամենը բաժին				1706.196
	6. ԵՊՀ Բյուրականի ուսումնա-արտադրական բազայի ճաշարանի և 2-րդ մասնաշենքի մասնաշենքերի կաթսայատների				

	համաշինարարական աշխատանքներ				
1	Դռների տեղադրում մետաղապլաստե պրոֆ. 60 մմ հաստ. ապակեփաթեթով 4 x4 մմ, սպիտակ գույնի, խուլ	մ2	5.67	27	153.09
2	Դռների շեպերի սվաղ գաջե շաղախով	մ2	1.53	3.2	4.896
3	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ2	36	2.6	93.6
4	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0.072	59	4.248
5	Պատերի լավորակ գաջե սվաղ	մ2	72	1.3	93.6
6	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ2	72	1	72
	Ընդամենը բաժին				421.434
	Արևային ճնշումային թերմոսիֆոն համակարգ 90 հատ վակումային կոլբաներով	կ-տ	3	365	1095
	Ընդամենը բաժին				1095
	Ընդամենը				19338.926
	ԱԱՀ 20%				3867.7851
	Ընդամենը				23206.711

* Կապալառուն աշխատանքները կատարում է Արագածոտնի մ., գ. Անտառուտ, I-ին փողոց, 7-րդ փակուղի, 49 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդիշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010000906
Հեռ.՝ (+37410) 555240
Էլ. հասցե՝ gnumner.eph@mail.ru
ՀՎՀՀ՝ 01506928
Պրոռեկտոր՝ _____ Ա. Գ. Մալխասյան
ստորագրություն

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՇԻՐԱԿ Մ/Ճ
Հ/Հ՝ 163527033183
Հեռ.՝ 093030366
Էլ. հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
ՀՎՀՀ՝ 05510886
Տնօրեն՝ _____ Հովհաննես Ահարոնյան
ստորագրություն

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«12» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԵՊՀ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒԱԲ-Ի 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՃԱՇԱՐԱՆԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ԵՊՀ Բյուրականի ՈՒԱԲ-ի 2-րդ մասնաշենքի և ճաշարանի ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքներ	« 12» ապրիլի 2021թ.	« 14» հունիսի2021թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**45 օր**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդիշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010000906
Հեռ.՝ (+37410) 555240
Էլ. հասցե՝ gnumner.eph@mail.ru
ՀՎՀՀ՝ 01506928
Պրոռեկտոր՝ _____ Ա. Գ. Մալխասյան
ստորագրություն

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՇԻՐԱԿ Մ/Ճ
Հ/Հ՝ 163527033183
Հեռ.՝ 093030366
Էլ. հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
ՀՎՀՀ՝ 05510886
Տնօրեն՝ _____ Հովհաննես Ահարոնյան
ստորագրություն

Կ.Տ.

Հավելված N 3
« 12» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45331100	ԵՊՀ Բյուրականի ՌԱԲ-ի 2-րդ մասնաշենքի և ճաշարանի ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքներ					23206711	23206711	23206711	23206711	23206711	23206711	23206711	23206711	23206711

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Երևանի Պետական Համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդիշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010000906
Հեռ.՝ (+37410) 555240
Էլ. հասցե՝ gnumner.eph@mail.ru
ՀՎՀՀ՝ 01506928
Պրոռեկտոր _____ Ա.Գ. Մալխասյան
ստորագրություն
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Շինարար-97 ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
Բանկ՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ ՇԻՐԱԿ Մ/Ճ
Հ/Հ՝ 163527033183
Հեռ.՝ 093030366
Էլ. հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
ՀՎՀՀ՝ 05510886
Տնօրեն՝ _____ Հովհաննես Ահարոնյան
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված թիվ 4
«12» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«12» ապրիլի 2021 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՇՁԲ-21/71 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն